Փոխոջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

Տարեկան բաժանորդագինն է երկու ես կես արծաթ Մեճիտ կանխիկ վճարելի, թէ՛ մայրաքաղաքին եւ թէ արուարձանաց եւ թէ՛ գաւառաց համար։

Վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

Հատը 40 փարայ է, եւ կը գտնուի մասնաւորապէս Պանճէ-Գաբու չրավճառ. եւ գրավաճառ. Պօղոս եւ Յակոբ աղայից խանութները։

ՓՈՒՆՋ

Թանուցման տողը 3 դուրուշ է մէկ անգամի համար։ Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար։

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի ատ. Տճօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան կ. Պոլիս Գալաթգ-բազար Նաֆիյէ խան վերի յարկ թիւ 16։

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Arménien Pountc
—16 Nafié-Han, Balouk-Pazar 16—
CONSTANTINOPLE

Թիւ 2207 — ՈՒՐԲԱԹ — 1890 ՅՈՒՆԻՍ 15

ԽՄՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՋԻ

Վաչէ՛ս Շեհ-Եղբ. – Նկատի ունիմ Ալէքսանդրիոյ գիւղի աղգայինք ձեր. Առաջնորդին միջոցաւ երկու չաթի յառաջ Պատրիարքարանէն արտօնութիւն խնդրած էին՝ 6-700 լիրա ծախիւք վարժարանի մը չինութեան համար։ Այս խնդիրն ըստ օրինի յղեցաւ առ Տնտեսական Խորհուրդն, որպէս զի քննէ իմանայ թէ յիշեալ գիւղացիք կրնա՞ն ի գլուխ հանել չէնքն առանց պարտք ընելու։ Յայտնի է թէ վարժարանի և եկեղեցւոյ չինութեան վերաբերեալ խնդրոց մէջ Պատրիարքարանն այսպիսի քննութիւն մը անհրաժեշտ կը համարի, վասնզի գիտենալով թէ յաճախ պատուոյ ենթարկուած են չինութեան ընդող թաղեցիք, գիւղացիք կամ քաղաքացիք, և թէ՛ իրենք և թէ՛ Պատրիարքարանն ապա ոչ օգտակար նեղութիւն կրած են։

Բայց, ըստ մեզ, եկեղեցւոյ և վարժարանի չինութեանց առթիւ այսչափ քննութիւն բաւական չէ։ Պէտք է միանգամայն քննել թէ այս ինչ թաղի, գիւղի կամ քաղաքի համար այսչափ լիրա ծախիւք եկեղեցի կամ վարժարան կառուցանել պատշաճ է, և թէ ինչ անչարժ կալուած ունին կամ պիտի ունենայ։ Վասն զի ինչ օգուտ եկեղեցական և կրթական հոգեպատ չէնքերէ, երբ ղուրկ կը գտնուին նոքա անշարժ և ապահովեալ հասոյթէ, և միշտ նուիրատուութեամբ պիտի հայթայթուին նոցա պէտքերը։ Մանաւանդ վարժարանաց ծախուց դէմ մէկ մասին ապահովութեան համար իրենց անձնական ամենայն խնամով հոգ տանիլ առանց այլ և է փոխարինութեան, և մինչև իսկ տալ նոցա կրթական պիտոյքն։ Ահա այսպիսի կարեւորագոյն նկատմամբք հարկ է չէնքերէ աւելի նոցա անշարժ հասոյթից առաւելութեան համար ջանալ և կանխաւ անօրինութիւն. ներ ընել, որպէս զի ապա այդ չէնքն անօգուտ և ապարդիւն վիճակի մէջ չտեսնուի։

(Թղթակցութիւն Փունջի)

Տաճն. 19 Մայիս 1890։ – Տարօնոյ լայնատարած վիճակն հանդերձ իր պաշտելի ու նուիրական վայրերով՝ տարիներով գրեթէ մատնուած ազգային անիլնական անորոշ ու տարտամ մի վիճակի, վիշտ ու ցաւ կառքեր ամէն ազգայնոց։ Տարօնոյ Առաջնորդութեան խնդիրն չատ խառնուածեայ, չատ տարուբերուեցեալ ի Պատրիարքարան. Գործեան հանգուրցի մը նմանութիւն ղողջես ունենալով լուծում տալ գժուարացեր էր։ Գոհութիւն կեդր. պատկ. Վարչութեան, որ հնարակ ուրեմն Տարօն ունեցաւ իրեն արժանն ու բանիւրուն մի գլուխ, գԳեր. Հ. Խարախանեան, որ լուռ ու մունջ կը գործեր ըստ իր սովորութեան. իր համեստ, գործունեայ և համբերատար ոգւով կը մխայեր ու կը մաքառէր այն խոչընդոտներու դէմ որով լի եր և է իր ասպարէզն։ Մշոյ ժողովներն ու ժողովուրդը տեսան, ճանչցան և համոզուեցան թէ «Սա է ժառանգն». ընտրեցին զնա ընդհանուր վանահայր և Առաջնորդ, և հաստատեց զայդ ընտրութիւն կեդրոնական պատկառելի Վարչութիւն։ Սակայն արժանաւոր վարձատրութիւն չէ տակաւին այն եկեղեցականին, որ ոչ թէ մէկ և՛ ոչ թէ երեք, այլ 12 տարի է որ իւր կեանքն կանգնէ ազգային գործոյ մէջ անդադար գործելով և հնազանդութեամբ երթալով յայն ամենայն տեղիս, ուր կը հրաւիրեն զինքն Ազգն ու Պատրիարքարան, և իր խղճի ձայնն։ ԳԳեր. Հ. Խարախանեանի գալէն ցայսօր բացուեցան չատ մը դպրոցներ գիւղերու մէջ, ինչպէս Յալիճան, ի Բերդակ, ի Խասփուզ, յԵրիզակ, ի Յուշտամ, ի Վարդենիս, յԱրտօնք և այլ գիւղեր. և երթ արժանաւոր ուսուցիչներ ունենար, գեռ չատ դպրոցներ պիտի բացուէին մեր աղքատիկ աշխարհի անօթի գիւղերուն մէջ, որք դպրոցի երես տեսած չեն։ Լսեց և կը լսէ միշտ Մշեցին Խարախանեանի աղգու և գեղեցիկ քարոզներն, որք ծառայեն պահել զմեզ ի փարախ առետարանական ճշմարտութեան։ Հ. Խարախանեանի անոյշ և քաղաքագէտ վարմամբք Մշոյ Առաջնորդարանի մեռեալ ազդեցութիւնն ու դիրքը կենդանութիւն առին յաչս տեղական կառավարութեան. վանքեր (որոց վրայ երկար և առանձին պիտի գրեմք) նոր ուղղութիւն ստացան. չչուկ ու ալմուկ չունի իր գործոց մէջ. իր գրապանակն և դքղանոց հանդերձից լայնել չգիտեր. կը խօսի ամէն դասու մարդկան հետ, կունկնդրէ, կըղդածուի և կը կարեկցի։ Խարախանեանի այս յատկութիւնք և Մշոյ դիրքն ու պարագայքն հարկ կը դնեն մեր վրայ ըսել թէ այդպիսի եկեղեցական մը պէտք է վարձատրել առատապէս, տալով նմա եպիսկոպոսութիւն։ Տուրուբերանի Առաջնորդութիւն, կարծեմ, հաւասար է Բարձրահայոց Առաջնորդութեան՝ չատ մը տեսակէտներով ու պարագայներով. ուստի և արդարութիւն է որ կեդրոնական պատկառելի Վարչութիւն ուշադրութիւն դարձընէ այս խնդրոյ վերայ և տայ Գեր. Իւթիւճեան Ս. Հօր ընկեր Գեր. Հ. Խարախանեան, որք պիտի լինին ամրք յառաջադիմութեան և պայծառութեան իրենց վիճակաց։ Կը հրաւիրեմք նաև Մշոյ Երեսփոխանութեան խորին ուշադրութիւն ստոր վերայ, որպէս զի վութեան աւելի բարձր դրից տիրացնել մեր աչխարհի Առաջնորդարանն, իրենց պաշտօն անթերի և խղճի մտօք կատարելով, ընդհանրութեան չահը միշտ նախադաս համարելով անհատական չահերէն և գրկելով այն անձնասիրութիւն, որ հասարակաց պատուելի է։ Առ այժմ այսչափ. հետզհետէ պիտի գրենք մեր աչխարհի և մեր վանքերու բարոյական և նիւթական, տնտեսական և ընկերական կեանց վերայ։ Վահէն

Բալա. 20 Մայիս 1890։ – Հասան, Ռոշէն և Պանդոխտն։ – Բալուայ վիճակի ամենէն նշանաւոր գիւղն կրնայ համարուիլ Հաւասան, որ կը բազկանայ 170-180 տնէ՝ զուտ հայաբնակ և լուսաւորչաձին։ Դիրքն բոլորովին տափարակ է չրջապատուած բաղմաթիւ այգիներէ և պարտէզներէ. օդն խիստ առողջարար, ջուրերն վճիտ և քաղցրահամ, քնակիչք քաջառողջ և աչխատասէր, որոց մէկ մասն կըզբաղին երկրագործութեամբ. իսկ մնացեալք ի Ն. Ռուիկ անունն. կայ մի զբօսավայր դաչտադեղ, մի քարայր, խաչակիր քարեր, ուր բարեպաշտուհիք նոյն օր յանուն Սրբոյն Կարապետի մոմեր կը վառեն։ Համբարձման առաւօտ Հաւասանցիք, արք, կանայք, երիտասարդք և կուսանք, գունդ գունդ կը դիմեն անդր ամենայն պատրաստութեամբ. ալևորն ու պառաւն իսկ նոյն օր կարծես նոր ոգի առած կըհետեւին յառաջընթաց խմբեակներուն. անդ տեսանելու արժանի է մանկամարդ կանանց և օրիորդաց դեղջկական պարերն. տեսնելու արժանի է մանաւանդ դպրոցական երգեցիկ մանկանց քաղցրալուր և գողտրիկ երգերն, երիտասարդաց ցնծութիւն և ուրախութիւնն. և որ զարմանալին՝ պառաւին այն մեծ ոգեւորութիւնն, որ մերթ մատաղ մանկան օրրանը կը շարժէ, և մերթ իր տրամադրութեան ներքև պարող խումբին ապուրճիկն (ճաչ) կը պատրաստէ ամենայն յօժարութեամբ. և ի՞նչ է գեղջուկին ու գեղջկուհւոյն նպատակ. ո՛չ այլ ինչ, այլ միայն պատուել տօնել Ս. Համբարձման հանդէսը ի յիշատակ Զիթենեաց լեռին. այսպէս օրն ի բուն ցնծութեամբ անցընելէ յետոյ երեկոյեան ժամը 11 ին խմբովին կուգան մտնել Ս. Աստուածածնին վանքը յուխտ և յերկրպագութիւն, տալով իրենց գեղջկական նուէրներն. նոյն ուրախութեամբ կը վերադառնան ի գիւղ։ Այս հանդէս միւս հայաբնակ գիւղերն ալ կը տօնեն, բայց այս գիւղին տօնածին անհասասար կերպով։ = Հայ երիտասարդն Համբարձման տօնի օր եղած էր յՈւռհայ իւր վերջին հրաժեշտն տալու նպատակաւ։ Այդ ուրախութեան վաղանցիկ ժամերու մէջ մոռցած էր խոպառ այն տխուր օրը և ժամը, որ մի եօթնեակ յետոյ պիտի անջատէ հայրենեաց ծոցէն, հայրենի յարկէն, ծնողաց գրկէն, ազգականաց և բարեկամաց տեսութենէն, և որ ցաւալին է՝ ամուսնոյն և զաւակաց գոլեանքէն. դէպ ի պանդխտութիւն կերթայ իւր ընտանեաց և զաւակաց օրապահիկն ճարելու. անցաման տեղն է Մանկենկոլ գիւղն կէս ժամ հեռի։ Հայ երիտասարդաց այս երթնուդուն սրբատաճիկ տեսարան մը և ահագին բազմութեան մը լացն ու կոծն է. հայ ուղևորն հազար և մէկ հառաչանքներ կ'արձակէ իւր սրտիկէն, երբ իւր աչերը մի անգամ կը դարձընէ Ուռհիի վրայ, երբ կրկնակի ակնարկներ գիւղի չրջակայ պարտիզաց և այգեաց վրայ, ուր ժամանակ ժամանակ ժուռ եկած է ընկերական խումբերով։ Մանկենկոլ (մանկան լիճ) խառնուած է ահագին երկսեռ բազմութեան մը, որոց հոսած գառն արտասուք աստուածն կրնան լճակ մը կազմել։ Արդ ժամ է անջատման. քահանայք արտասուաթոր աչօք ծէր ուղեկա ղղնացս մեր կը կատարեն. ահա այս աւաղուկ մրմունջն է որ ողբալ կուտայ Մանկենկոլայ անձ անձ քարերուն, այդ վերայ պահիկ մը առաջ եղկելին նժդեհ յուշ ի ձեռին նստած էր խռովայզ չրջապատեալ իւր պարագաներէն։ Ահա վերջին վայրկեանն է որ

կուգայ անդթաբար անջատել ըզ նժդեհն իւր համայն սիրելիներէն. նժդեհն յակամայս կը բաժնուի. տան քայլափոխին մի անգամ կըստիպուի յետս նայիլ. այսպէս կանհետանան իւր արտօրսալից աչքերէն տուն, պարտէզ, այգի, բարեկամք սիրելիք, մանաւանդ սիրեցեալն Ուռիկ, ուր և եթէ կը մնան նժդեհին քաղցրիկ յիշատակները։ Ղևոնդ Ք. Տ. Ալթխանեան

Մանիսա. 31 Մայիս 1890։ — Իւր կաթողիկոսական ընդրութիւն ամբողջ հայութեան հանրածանօթ Մաղնիսա՝ 45-50000 բնակչօք վաճառաշահ քաղաք մ'է, որոյ մեծամասնութիւնը կը կազմեն թուրքք և ապա յոյնք, և յետոյ հայք և հրէայք. իւր դիրքն բարեխառն ու գեղեցիկ է, բերքերն են ընդհանրապէս ցորեն, գարի, խոզկաղին, չամիչ, բամպակ և այլն, զոր տեղացի վաճառականք մեծ քանակութեամբ կը փոխադրեն ի Զմիւռնիա. սակայն այս տարուան երաշտութիւնն իրական հարուած մը տուած է երկրագործութեան։ — Տեղւոյս Հայք երկու թաղերու բաժնուած են. վարի և վերի թաղ. Վարի թաղի Հայք կը բաղկանան 400 տուներէ. ունին եկեղեցի մը Ս. Սիօն անուամբ՝ յորում կը պաշտօնավարեն պանդուխտ քահանայք 4-5 տարիներէ ի վեր. ունի երկու վարժարան, մին՝ արական, միւսն՝ իգական. դասատուաց, վարժուհեաց և ուրիշ ո և է պիտոյք կը հոգացուին եկեղեցւոյ և դպրոցի եկամուտներէն, որք ընդհանրապէս անչարժ կալուածներ են. արական սեռի վարժարանի չէնքն ըստ բաւականի գեղեցիկ է. ունի ծաղկոց մը և նախակրթարան մը ընդ ամենը 90-100 աշակերտօք. սոցա թիւը երբեմն հասած էր մինչև 160. իգական սեռի յատկացեալ վարժարանի չէնքն խարխուլ է և իբր հիւանդանոց կառուցուած ու անգործածելի մնալէ յետոյ վարժարանի վերածուած է. այս վարժարան վերջերս բարեփոխուելով՝ իւր աւելորդ սենեակներէն մին ընդարձակ ընտելարան մը չինուած է՝ ուր կերթեւեկեն 4-6 տարեկան 40 ի չափ երկսեռ մանկտի։ Առաջին սրահին մէջ կուսանին այժմ 70-80 ի չափ աշակերտուհիք. այս թիւն ալ երբեմն մինչև 130 հասած է։ Զգայուն սիրտ ուներցողն այս տողերն կարդալու ժամանակ պիտի նշմարէ ներկային և անցեալին մէջ անհուն տարբերութիւն. անշուշտ զարմանք պիտի զգայ և ժամանակ մը իւր մտածութեան առարկայ ընելով պիտի ստիպուի հարցնել թէ՝ ո՞ւր մնացին միւս աշակերտք. մեռա՞ն արդեօք, — ո՛չ երբէք. օտար երկիրնե՞ր գաղթեցին ընտանեօք, թէ՝ իրենց ծնողքը ուրիշ քաղաքներ ղրկեց իւրեանց կիսկատար ուսումն աւարտելու. ո՛չ երբէք. երա՛նի թէ այնպէս ըլլար։ Ընդհակառակ՝ նոցա մէկ մասը փողոցները կը թափառին. ոմանք յունաց վարժարան կը յաճախեն և դեռ իրենց մայրենի լեզուն չըսորված օտար լեզու սորվելու կը հետամտին. իսկ ոմանք տակաւին իւրեանց անունը կատարելապէս դրել չսորված՝ վարպետներու քով կերթան արհեստ սորվելու յուսով. մաս մը ևս՝ իբր 40-50 երկսեռ մանկտի՝ կը յաճախեն քաղաքական ազգային վարժարան։ Այս վիճակ կարի արդահատելի է, և Մաղնիսայի ապագայ սերունդն առաւել վատթար ուրոյն պիտի ըլլայ, եթէ դեռ ևս չարունակուին ծանօթ խառվութիւնք։ Եթէ կայ Մաղնիսայու համար փունջի պատուարժան ընթերցողաց հաղորդելի լուր մը, ա՛յն է նորակառոյց հիւանդանոցն որ տեղւոյս ժողովրդեան հաւատոյ նուէրներովն սկսուած է. եկիր աղա Պողոսեան Զմիւռնիացի նուիրատուի մը քաջալերութեամբ չինութեան ձեռնարկուած է թաղին հարաւային արևմտեան կողմն ընդարձակ դետնի մը վրայ. փառաւոր հիւանդանոց մը պիտի ունենանք. մասնաւոր շնորհակալութեան արժանի է ճարտարապետ Զմիւռնիացի Թովմաս էֆէնտի, որ իւր ձրի աշխատութիւններովն և խրախուսական յորդորներովը 3-4 տարիէ ի վեր դէմ դրաւ ամեն դժուարութեանց, կէտ նպատակի ունենալով այդ հիւանդաց պատըսպար լինելու վայրի չինութիւնը ի կատար հաներու։

Մ. Ս. Եզեքիանց

Օրեսա. 29 Մայիս 1890։ — Քաղաքիս ազգային Ուսումնարանը այս տարի բաւական յառաջադիմութիւն ցոյց տուաւ. հանցաքննութիւններ սկսան և շարունակուեցան, որ կը տևէ մինչև Յունիս 10։ Ուսումնարանը երկսեռ է և սովորում են 22 օրիորդներ և նոյնքան ալ մանչ տըղայք։ Ուսումնարանը պահպանում է եկեղեցական գումարով և մանաւոր տրօք ժողովրդեան։ Սովորում են կրօն, Հայոց լեզու, Ռուսաց լեզու, Թուաբանութիւն, Երգեցողութիւն և Ձեռագործ։ Ուսումնարանը ունի Հոգաբարձուներ, որոնք տնտեսական մասը հոգում են. իսկ ուսումնական մասը հոգում է ուսուցչական ժողովը, աւագ ուսուցչի նախագահութեամբ։ Նորընծաիր Հոգաբարձուներուն վրայ սրբազան պարտք կայ դրուած՝ այսուհետև աւելի յառաջադիմութեան մէջ պահել Ուսումնարանը, որովհետև նախկին Հոգաբարձուների անխոնջ գործունէութեամբ հին և խարխուլ ուսումնարանը հիմնովին վերանորոգեցաւ. հին դրասեղանները նոր գրասեղանների փոխուեցան, նոյնպէս և ուսումնարանի յառաջադիմութեան բաւականին օգնեցին, որով չնորհակալութեան արժանի են. այժմ կը մնայ նորերին ալ միևնոյն ճանապարհով գնալու։ Նոյնպէս նոր ընտրութիւն եղաւ երեսփոխի, որ ընտրուեցաւ հարուստ և միանգամայն ազգասէր և բարեբաշտ Աստուածատուրեան Սիրական պաշտ, որոց գերդաստանը Ադքիրմանի մէջ անուանի է իւր բարեգործութիւններով։ Յանկամք յաջողութիւն։ Իսկ գալով ժողովրդի և եկեղեցական գործոց մասին, թողում եմ հետևեալ նամակ։ — Բարձրագոյն թոյլատրուած է 1894 թուականին ընդհանուր Ռուսաստանի աշխարհանդէս անել Օռէնսայում, որ ժամանակ Օռէնսայի հարիւրամեակը լրանում է։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց հաճեցաւ՝ Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարք Հօր միջոցաւ Խաչանչան չնորհել Կ. Պոլսոյ պատրիարքական փոխանորդ Գերդ. Տ. Ներսէս Ծ. վարդապետի Ալբանեան, և Զմիւռնիոյ պատրիարքական փոխանորդ Գերդ. Տ. Ծովսեփ Ծ. վարդապետի Այվազեան։

— Գերդ. Տ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան առաջիկայ երկուշաբթի մայրաքաղաքս կը հասնի Եգիպտոսէն։ Տեղւոյն ազգային վարչութիւնն բժիշկներէ խմանալով որ Նորին Գերապատուութիւնն արդարև անձնական տկարութիւն ունի, հարկադրուեր է ընդունիլ հրաժարականը։

— Բարեյիշատակ Ծովսեփայ Իզմիրեանց կտակի գործադիր մնայուն Ձանձնաժողովոյ կողմանէ կը ծանուցուի թէ Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութեան հանդէսն, զոր Հանգուցեալն հաստատած է ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ լաւագոյն երկասիրութեանց համար, տեղի պիտի ունենայ ընդ նախագահութեամբ Ամեն. Տ. Պատրիարք Հօր, ի տոնի Սրբոց Թարգմանչաց մերոց, յառաջիկայ հինգշաբթի օր, Յունիս 21, ի ժամ 4, յազգային Խորհրդարանի Ղալաթիոյ։

— Ուսումնական Խորհուրդը, մայրաքաղաքիս դպրոցական ընթացաւարտից թէ՛ ուսումնական կարողութեան ի մտոյ վերահասու լինելու և թէ՛ նոցա մէջ գովելի նախանձ մը վառելու նպատակաւ, որոշած է ազգային երկրորդ աստիճանի վարժարանաց ընթացաւարտից մէջ մրցում մը բանալ ի ներկայութեան Խորհրդոյն և ի նմանէ կարգեալ յատուկ քննչաց և ազգային խմբագրապետաց։ Մրցումը տեղի պիտի ունենայ վաղը, շաբաթ, 16 Յունիս, ժամը ճիշդ 3½ին, Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ։

— Հնդկաստանի և Պարսկաստանի նախորդ առաջնորդ Գերդ. Տ. Գրիգորիս Ս. Արքեպիսկոպոս՝ առաջիկայ կիւրակէ, Յունիս 24, Ղուզղունճուգի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ պիտի մատուցանէ ի յիշատակ հանգուցեալ Տ. Ծովհաննէս Եպիսկոպոսի Սեթեան։

— Ահաւասիկ Վսեմ. Ասպետ Ջունդեի Հիմնարկութեան կանոնագիրն, զոր աւստրիական դեսպանատունն յղած է ի Պատրիարքարան։

«Հիմնարկութիւն-Ասպետ Ջունդ-ստեղծեալն յԱսպետէ Ասատուր Ծատրոյ տը Ջունդ, որ հպատակն է Աւստրիոյ և բնակէ ի Կ. Պոլիս, սահմանեալ է ի խրախոյս վերադարձ ուսմանց ի Հայս ուղղափառս (Գրիգորեան)։ Սկիզբն գործոյ Հիմնարկութեանս լինիցի ըստ կրնի մահուան հիմնարկողին։ Նախաւոր դրամագլուխն որ վասն այսր վաճառանի եդեալ է ի Հիւպատոսարանն Կայսր-արքայական Աւստրիոյ-Հունգարիոյ որ ի Պոլիս, է գումար (60000) վաթսուն հազար ֆրանքաց, յորում բարդեալ են տարեկան տոկոսիք մինչև ի մահն հիմնարկողին և աճելոց պարգեւօք և հաւրէն հրիտակօք զոր լինքն առնելոց է վասն իւրոյ գործոյ։ այս լինելով վաճառն նորա ըստ հետևեալ պայմանաց։

Ա. — Եկամուտ բովանդակ դրամագլխոյն զոր Հիմնարկութիւն Ասպետ Ջունդի դնելոց է զկնի մահուան հիմնարկողին՝ պարտի առ մէն մի թոշակ հատանել ի գումար 2000 ֆրանքաց ի պէտս ուսանողաց ուղղափառ (Գրիգորեան) Հայոց՝ որ յԱւստրիա և ի Հունգարիա և յայլ ամենայն պետութիւնս, և որք չքաւորք իցեն և փափաքիցեն ի հանալուարանի ուրեք յԱւստրիա-Հունգարիա կամ յայլ աշխարհ կատարել զընթացս ուսմանց իրաւագիտութեան, բժշկութեան, աստուածաբանութեան, փիլիսոփայութեան, երկրագործութեան, ճարտարապետութեան կամ այլ ամենայն արուեստաւոր գիտութեանց և ազգանական արուեստից։ Ընտրութիւն ասպարէզին և համալսարանին թողեալ է ի կամս ուսանողաց՝ միայն զի և իշխանութիւնն՝ որում անկանի զընտրութիւնն կատարել ըստ Դ. և Ե. յօդուածոց, հաւան գտցի։

Բ. — Հիմնարկութիւնս վարիցի ի ձեռն հիւպատոսարանին Աւստրիա-Հունգարիոյ Կ. Պոլսոյ, որ առ դիւրել ջանից իւրոց կարէ կարգել զոք խնամակալ, միշտ ընդ իւրով հակոզութեամբ, եւ նմա պարտք են կատարել զառնչութիւն ընդ ուսանողաց և հսկել ուսանց նոցա։ Սոյն այս խնամակալ զհաչիւ տեսչութեան իւրոյ ամի ամի մատուցանէ հիւպատոսարանին եւ ընկալցի զգինս ծախուց իւրոց։ Ի խնդրոյ խնամակալին, հիւպատոսարանն ի վարձ տարեկան աշխատութեան եւ բոլոր ծախուցն նորա կարէ տալ առ առաւելն 1000 ֆրանք միայն։

Գ. — Դրամագլուխ Հիմնարկութեանս հանդերձ ամենայն յաւելուածովք պահիցի ի հիւպատոսարանն Աւստրիա-Հունգարիոյ Կ. Պոլսոյ կամ ի ձեռն նորա արկցի ի միւսմ յառաջնակարգ պանգայից՝ այլ միշտ ընդ համարապատութեամբ հիւպատոսարանին։

Դ. — Խնդրուածք առ ստանալ զմի ի թոշակաց ուղղին առ հիւպատոսարանն Աւստրիա-Հունգարիոյ Կ. Պոլսոյ, եթէ խնդրողն ի հպատակաց իցէ Պետութեան Աւստրիոյ և Հունգարիոյ, իսկ առ Պատրիարքարանն ուղղափառ (Գրիգորեան) Հայոց Կ. Պոլսոյ՝ եթէ ի հպատակաց իցեն այլազան պետութեանց։ Մի թոշակ իրաւամբ վերապահեսցի միշտ վասն ուսանողի՝ որ Աւստրիոյ հպատակ ուղղափառ (Գրիգորեան) Հայ իցէ, և միւս թոշակ վասն՝ որ Հունգարիոյ հպատակ ուսանող իցէ։ Ի դէպս յորս ի մի մասանցն միաչեւութեան ոչ գտանի բնիկ ոք արժանի՝ հիւպատոսարանն կարէ զերկոսին թոշակսն սահմանել այլեւս՝ որ գտանիցի կամ ընդ Աւստրիոյ կամ ընդ Հունգարիոյ պետութեամբ՝ միայն զի կատարեալ արդարութեամբ ընտրեսցի։ Իսկ իդէպս՝ յորս և ոչ ի միւսմ յայոց մասանցն գտանի արժանի ուսանող ի ժառանգութիւն երկոցուն վերապահեալ թոշակաց՝ հիւպատոսարանն սահմանէ զընոսին վասն ընտրելոյն ի կողմանէ Պատրիարքարանին։ Ընդունելութիւն Աւստրիացի և Հունգարացի հպատակաց կատարի ի ձեռն հիւպատոսարանին այսպէս. հրատարակէ և հրաւիրէ որ ոք կարօտ կամ չքաւոր իցէ, և ի վարս անբասիր, և որ վկայական ի ձեռին ունիցի յաջողակաւ լինելոյ յերկրորդական ուսմունս և ըստ արժան բաւականի վարժ ի հայերէն լեզուի և հմտացեալ Հայոց պատմութեան։

Ե. — Միւս այլ թոշակն տայցին, ի ձեռն Պատրիարքարանի, առ հայ ուսանողս պատկանեալս ուղղափառ (Գրիգորեան) Հայոց առանց խտրելոյ զերկիր պետութեան։ Բայց ի վկայականաց չքաւորութեան և անբասիր բարուց՝ զոր մատուցանելոյ են ուսանողքն առ Պատրիարքարան, պարտին քննել, նախ քան զընդունելութիւնս, մանաւոր քննութեամբ ըստ եղանակի զոր Պատրիարքարանն որոշէ և ըստ պահանջել ժամանակին։ Պատրիարքարան զտեղեկագիր քննութեան և զանուանս ընտրեալ թոշակառուացն առաքի առնէ Հիւպատոսարանին Աւստրիոյ-Հունգարիոյ. սա ընդունի զմատուցեալն ի Պատրիարքարանէ՝ այլ ի լինել կարևոր պատճառի ծանուցանէ և առաջարկէ զայլ ոք փոխանակել ի տեղի մերժելոյն։ Աւյպէս ի պակասել միոյ ի թոշակառուացն միշտ այլ ոք ընծայեսցի ի ձեռն Հիւպատոսարանին և Պատրիարքարանին։

Զ. — Պատրիարքարան, ըստ ցանկութեան ողբացեալ իմոյ ամուսնոյ Տիկին Նեկտար տը Ջունդ սահմանեալոց է զմի ի թոշակացն վասն ուսանողի ի կանանց սեռէ, որոյ փափաք իցէ ուսանել զվերկարգ գիտութիւն յօտար աշխարհի և ինմա կատարեալ գըտանիցին պայմանք ընդունելութեան նշանակեալք ի հիմնարկութեանս յայսմիկ։

Է. — Իւրաքանչիւր ուսանող զրաժին միոյ թոշակին վայելէ ցորչափ տեւէ ժամանակ վերակարգ ուսման՝ այլ ոչ առաւել քան զըզհինգ ամաց բոլորութեան։

Ը. — Խնամակալն զսահմանեալ գումարն հատուսցէ առ ուսանողսն ի կարևոր և քաջադէպ ժամանակի։ Պարտք են սմա տեղեկանալ ուր թոշակառուն բնակէ, հսկել ճշդութեամբ ի վերայ ընթացից ուսման նոցա, և թէ զվարդ յաջողեալ ի տարեկան քննութեան։ Խնամակալն կանոնաւորապէս տեղեակ արասցէ զՀիւպատոսարանն զորպիսութենէ ուսչակերտին և առաջարկեսցէ հանել զթոշակն յորմէ ոչ օգտակար դատիցի։ Վասն աշակերտաց որ չիցեն Աւստրիացի կամ Հունգարացի, Հիւպատոսարանն տեղեակ առնէ զՊատրիարքարանն և յայտնէ զորոշումն իւր և խնդրէ զայլ ոք աշակերտ փոխանակ առաջնոյն ընծայել։ Թոշակն ոչ են իրաւունք առողին կամ վայելողին, այլ ձրի պարգև՝ ցորչափ արժանապէս վայելէ։

Թ. — Դրամագլուխ Հիմնադրութեանս անձեռնամերձ կացցէ և մնասցէ. տոկոսիք միայն իպէտս արկցին ըստ չափու թոշակացն։ Ամենայն յաւելուած տոկոսացն հիմնադրութեանս՝ որ դեռ ևս ոչ իցէ բաւական առ գումար սահմանեալ թոշակին, բարդեսցի ի դրամագլուխն։

Կ. Պոլիս 3 ապրիլ 1890

(Մոլորեցուցիչ)

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՏԸ ՋՈՒՆԴ

Հաստատի վաւերականութիւն վերոյգրեալ ատորագրութեան Ասպետ Աստուածատրոյ որ Ջունդ։ Հիւպատոսարանն կայսր-արքայական հաւանի ատանձնել զկառավարութիւն առաջիկայ Հիմնարկութեանս ըստ ատորագրեալոյ և ձևակերպութեանց որ նշանագրեալ ի հիմնարկողէն։

Կ. Պոլիս 3 ապրիլ 1890

Հիւպատոս կայսր-արքայական
Ա. ատրիոյ-Հունգարիոյ
(Սոպոգքոնիե)
ՔՎԱՆԵԾ

Ատուածատուր ֆօն Ջունդ Ասպետն, ըստ կանոնագրի Ջունդ Ասպետ հիմնադրութեան, զոր ինքն հաստատեալ է ի 1890 յապրիլ 3 նուիրեալ գոլով զդրամագլուխ (60000) վաթսուն հազար ֆրանք ի պէտս թոշակի ուսանողաց ուղղափառ հայոց ըստ վերոյշնչ. նակեալ պայմանաց, և եղեալ յանձնդ ի հիւպատոսարանն կայսր արքայական Ա. ատրիոյ-Հունգարիոյ՝ հաճեալ եմ և ես ընդ հիմնարկութիւնս։ Եւ զի իրաւունք վերին հսկողութեան անկանի նախարարութեան արտաքին գործոց կայսրութեան և արքայութեան, ես և ամենայն որ զկընի իմ գալոց են՝ յայտնի պաշտաւնս խոստանամք խնամ ունել անվթար պահպանութեան դրամագլխոյն և աւանդիցն՝ որ յաճումն նորա լինելոց են, եթէ կատակաւ և եթէ բարդութեամբ տակաւին, և հսկել բարիոք մատակարարութեան հաստատութեանս ըստ կանոնաց Ջունդ Ասպետ հիմնադրութեանն։ Վասն որոյ զիր հիմնարկութեանս եղև ի չորս օրինակս, յորոց մին լինիցի առ հիմնարկողին, երկրորդն ի պաշտօնատան արտաքին գործոց կայսր-արքայական ի Վիէննա, երրորդն ի հիւպատոսարանի կայսր-արքայական Կ. Պոլսոյ, և չորրորդն ի Պատրիարքարանի ուղղափառ Հայոց ի Կ. Պոլիս։

Վիէննա 24 ապրիլ 1890

ՆՈՐԻՆ ԿԱՑՍ. ԵԻ ԱՐՔ.
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱՐԱՐ
ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՏԱՆ ԵԻ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾՈՑ
(Սոպոգքոնիե)
ՅՈՆ ՔԱԼՆՈՔԻ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Էվդաքի նախարար Չինի փաշա պատուիրեր է պաշտօնատան դիւաններուն, որ ցարդ չըգործադրեալ ինդիրք կարգադրուին մինչև յվերջ ամսոյս, նոր յանձնեալ ինդիրք մինչև երեք օր տնօրինուին, և եթէ բացառիկ պարագայ մը ներկայանայ՝ առ ինքն տեղեկագրուի։

— Տպագրական տեսչութիւնն ի պաշտօնէ կազդարարէ թէ Քէօթահիոյ Էսկի-չէհիր գաւառակի Գաղ-գավաղը անուն տեղը տօնական հաստատելու արտօնութիւն տրուած է, և թէ՝ վաճառականաց համար պէտք եղած ապահովութիւնը պիտի տրուի, և տօնակատարը Սեպտեմբերի 21 ին սկսելով՝ 15 օր պիտի տեւէ։

— Ներքին գործոց նախարարութիւնը պատուէր ղրկեր է գաւառներն՝ որ զօրաց խօսեցելոց թոյլ չտուի այլոց հետ ամուսնանալ։

— Կայսերական հրամանաւ երեք հատ երկրորդ կարգի նոր մարտանաւեր պիտի շինուին՝ 77,000 ոսկի ծախիւք։

— Այս չաբթու յատուկ յանձնաժողով մը գումարուած է՝ Շիրքէթի-Խայրիյէ և Իտարէի Մախսուսէ և ուրիշ օսմանեան շոգենաւային ընկերութեան մը միացման և մեծ ընկերութիւն մը կազմութեան համար կանոնագրութիւն մը խմբագրելու պաշտօնով։ Կըսուի թէ այդ ընկերութիւնը մէկ միլիոն լիրա դրամագլուխ պիտի ունենայ 10 ական լիրայի բաժնեթղթովք։

— Ի Բերա Ալէքսօ անուն 22 տարեկան երիտասարդ մը իւր հետ ժամանակէ մը հետէ ապօրինի կեցնակցող 35 տարեկան այրի կին մը սպաններ, մարմինը մետուկի մը մէջ սոսկալի դրիւք զետեղեր, և թողեր փախեր է։

— Ի Ղալաթիա, գարամանցի յոյն մը՝ Անանիա անուն՝ 50-55 տարեկան, ծայրագոյն թշուառութեան մէջ գտնուելուն պատճառաւ ինքզինքն սպաններ է պառկած սենեկին առաստաղէն կախուելով, և վրայէն թուղթ մը գըտներ է, յորում գրած է եղեր թէ ինքզինքն սպաննած է, և թէ ո՛չ մէկէն կասկածելու տեղի կայ։

— Առաջի վաճառական Ա. Հմէտ էֆէնտի անուն 28 տարեկան երիտասարդ մ՚ալ ինքզինքն սպաններ է, ծովը նետուելով։ Դիակը Ղալաթիա Ազապ-գափուի ծովեզրը գտնուեցաւ։

— Ասիական երկաթուղւոյ գծին մօտ Փիւրլիւ ըսուած տեղը բացուած խորխորատի վերայ մեծ քանակութեամբ հող փլելով՝ 9 գործաւորք ներքեւը մնացեր են։

— Անցեալ շաբաթ օրը յԵէնիգուլէ դերձանի նորահաստատ գործարանի բացման հանդէսը կատարուեցաւ ի ներկայութեան կառավարական բարձրաստիճան պաշտօնատարաց ոմանց, և այս առթիւ ուխարներ զենուեցան և բարեմաղթութիւնք եղան վասն Օգոստ. Սուլթանի։

— Վիճակագրութենէ մը կերևի թէ՝ Սէլանիկի նահանգն, 1304 ին, արտադրած է 3377527 քիլօ ծխախոտ, և 1305ին՝ 5026347 քիլօ։

— Մխախոտի Րէժիի հատոյթն նախորդ ամսոյ՝ 152000 լիրա եղեր է։

— Ըստ լրագրանաց Բալուզի Հայ արհեստաւորաց ոմանց՝ թղթատարական վարչութիւնն հարկ եղած կարգադրութիւններն ըներ է որ այսուհետև դրամածրար և աւանդ ընդունուի Բալուի համար։

— Մահուան դատապարտեցան Թահիէ անուն կինն՝ որ սպաննած էր ամուսինն, և Իպրահիմ անուն սպասաւորն՝ որ գործակցած էր Թահիէի։

— Մանիթէոր լրագիրը գրած է հետևեալն։ — «Մայրաքաղաքս առ վիէննական լրագիր մը դրուածին նայելով՝ Ֆիլ օղու Բէշիա անուն աւազակ մը իբր 15 արբանեկաց հետ կարնոյ Հաճիչէլը գիւղի Հայ Հռոմէականաց եկեղեցին մտնելով՝ անդ գտնուողներուն գոյքն ու դրամները կողոպտեր է։ Ըստ վերջին տեղեկութեանց՝ կարնոյ ժանտարմայից հրամանատարին կողմանէ ղրկըուած հեծեալ ժանտարմայից խումբ մը մինչև Տրապիզոնի նահանգի սահմանի ներսերն հալածելով՝ զԲէշիա և 13 արբանեակները ձերբակալեր կարին տարեր է, ուր դատուելով արժանաւոր պատժոց պիտի ենթարկուին, և կողոպուտը գտնուելով պիտի տրուի տէրերուն։ Նախնական հարցաքննութեամբ հաստատուեր է թէ գիւղին եկեղեցւոյն մէջ գտնուած կանանց գոհարեղէնները կորզած չեն՝ Վիէննայի թղթակցին գրածին հակառակ։ Կարնոյ և Տրապիզոնի կառավարական պաշտօնեայք բարւոք կը պաշտօնավարեն, և ժողովրդեան ապահովութեան ու անդորրութեան համար հոգ կը տանին, ինչպես կապայցուցի այս՝ յիշեալ աւազակաց անյապաղ ձերբակալմամբ»։

— Երզնկայի մէջ Զագմագճը Սիւլէյման անուն մարդ մը երիք ընկերաց հետ դինուորական բժիշկ հազարապետ Խայրուլլահ Էֆէնտիի տունը մտնելով՝ էֆէնտին և քոյրն սպաններ վախեր է, բայց ինքն ալ բռնուեր է սպանեալ, և ըստ տեղեկութեան Խարբերդի գաւառական լրագրի, 3 օր ի տես դրուեր է։

— Պրուսայի գաւառական լրագիրն ալ կը ծանուցանէ թէ՝ Իզնեկէօլ գաւառակի Գարաճադայա գիւղին մէջ Ապազա Սելիմ և Մանկալը Օսման անուն երկու վաղեմի չարագործք երկու ընկերօք ջաղացպան Ապազա Ալիի ջաղացքը կոխելով՝ նորա ձախ ականջի մէկ մասը կտրեր, և հրացանն յափշտակելով փախեր են, սակայն ձերբակալուեր են ապա։

— Տիարպէքիրէն առ Թարիփ թուրք լրագիրն գրեր են թէ՝ Մահալ ու Մէթինա գիւղերու մէջ վերջին օրերս տեղացած անձրևոյ հետ տեսակ մը կորեկ թափեր է անհամար քանակութեամբ, և թէ՝ ժողովուրդն հաւաքելով զայնս, իբրև ցորեն աղացեր՝ հաց չիներ կերեր, և իբրև ուտեստ ու սերմ ամբարեր է։ Այս կորեկներէն մէկ քանի հատ ղրկուեր են ի խմբագրատունն։

— Օգոս. Սուլթանի փեսայ Մահմուտ փաշայի ի Սիլիվրի ունեցած ագարակին տնօրէն Ահմէտ էֆէնտի և գործակատար Սալիհ պէյ անցեալ հինգշաբթի կառօք ագարակն երթալու ատեն, 8 հոգիէ բաղկացեալ աւազակաց խումբ մը յարձակելով նոցա վերայ՝ լեռը տարեր, և անդ նախ 12000 պահանջեր և ապա 3000 լիրա ոռոշելով փրկանաց համար, զՍալիհ պէյ արձակեր են, որպէս զի բերէ այդ գումարն, և սպառնացեր են աւերել այրել Մահմուտ փաշայի բովանդակ ագարակներն և սպաննել զՍալիհ պէյ, եթէ մինչև 3 օր չտանան պահանջուած գումարն։ Օգոստ. Սուլթանը լսելով զայս՝ հրամայած է ձերբակալել աւազակներն և ազատել Ահմէտ էֆէնտին։ Արդ ապակիք ծովու և ցամաքի կողմանէ պաշարուած են, և հազարաւոր ոռոխկան և ժանտարմա հետամուտ են աւազակաց։

— Մանասթըրէն կը գրեն թէ տեղական իշխանութիւնք կը պընդեն արհեստական աւուրք առնուլ հելլէն հպատակներէ, որք ցարդ չէին վճարեր։ Մանասթըրի իշխանութիւնք այժմ կզբաղին նոյնպէս հետևեալ դէպքով։ Հելլէն կին մը, որ վերջերս մահմետականութիւնն ընդունած էր Մանասթըրի մէջ, կուզէ քովը պահել զաւակն իրենց յանձնուի։

— Հալէպի գաւառական թերթը կը գրէ թէ կուսակալին նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուած է՝ նահանգին հանրային գործերը կանոնաւոր վիճակի վերածելու համար։

— Պերութի բանտին մէջ անձնասպանութեան փորձ մը կատարուեր է։ Բանտարկելոց մին բանտին ճէմիչին մէջ ինքզինքն սպանելի փորձեր է ապակիի կտորով մը խուշափողը կտրել աշխատելով, սակայն չէ յաջողեր և վզին վրայ թեթեւ վէրք մը միայն գոյացեր է։

— Նիկոմիդիայէն կը գրեն թէ երկաթուղւոյ գծին մինչև Ատապազար ու Սապանճա երկարացումը ձգտած է Նիկոմիդիոյ առևտուրին, որովհետև Ատապազարի ու Սապանճայի վաճառականք սկսած են ուղղակի մայրաքաղաքիս հետ կատարել իրենց առևտրական գործակցութիւնները։

— Զմիւռնիոյ Խըմէթ լրագրին մէջ կը կարդամք թէ Ա. յի-Նիքոլի թաղին մէջ գտնուած վահան ազայի գործարանին գործաւորայ մին Պետրոս, 50 տարեկան, կամայական մէջ ինկեր և ընկերայ մին Խայըրօղլ Ղազարոս օգնութեան փութալով ազատեր է, բայց մարմնոյն կէս մէջքէն վարի մասը բոլորովին այրած։ Խայըրօղլ Ղազարոս, կը յարէ Խըմէթ, իրաւունք ունի այլևս իւր մականունը փոխելու իւր այդ բարի գործին համար։

Պատուհանջան, Ատրիան, Պաշտօն. եւ Պարգեւ։ — Առաջին աստիճանի Մէճիտիէ պատուանշան՝ Իտալիոյ արքայական պալատան արարողապետ Ճիանօթի կոմսին։ — Տրապիզոնի Ագչէապատ գաւառակի գործադամ անուանեցաւ Մէհմէտ Ա. քիֆ էֆէնտի։ — Իմրէխյազ պատուանշանի ոսկի շքադրամ՝ Տիարպէքիրի կուսակալ Հաճի Հասան պէյի։ — Պանտրմայի գործադամ անուանեցաւ Պոտրումի գործադամ Իսմայիլ Շէվգը պէյ։ — Ա. յ. արբնի նահանգի Պոտրում գաւառակի գործադամ կարգեցաւ Պանտըրմայի գործադամ Էօմէր Խուլուսի պէյ։ — Պրուսայի կէօնան գաւառակի գործադամ ընտրեցաւ Սանտըգլըի գործադամ Ահմէտ պէյ, և Սանտըգլըի գործադամ անուանեցաւ Կէօնանի գործադամ Մէհմէտ Թէվֆիգ պէյ։ — Սալիսէլի աստիճան՝ Պաղատատի կուսակալ Սըրրի փաշայի որդի Եուսուֆ Բազի պէյի։ — Եօզղատի կառավարիչ կարգեցաւ Ճէպէլը-Պէրէքէթի կառավարիչ Ապտիւլ Վէհապ փաշա։ — Ճէպէլը-Պէրէքէթի (Ատանա) կառավարիչ անուանեցաւ Մահմուտ պէյ, որ յառաջագոյն վարած է այդ պաշտօնը։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ. Պոլիս 15 Յունիս 1890

Օսմանեան Բանսօլիտէ	20-30
Բուժելիի Երկաթուղի Ֆրանգ	79-
Թրամուէյ	Լ. Օ. 502-

Օսմանեան լիրան 100 դրուշէն

Մէճիտիէ	108-12
Մէճալիք	100-
Հինգնոց	103-10
Վեցնոց	103-
Բուպլի Թղթադրամ	7-97
Բուպլի արծաթ	78-
Ռուսիոյ Բոլ	90-20
Գաղղիական լիրա	87-30
Անգղիական »	10-200
Դրխմից	51-10

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

= Կըսուի թէ Ռուսաստանի պահապան զօրքն արտաքոյ քաղաքին բանակած է, կառավարութիւնը նոյն զօրաց արգելած է ո՛րևէ հաղորդակցութիւն քաղաքին և բնակչաց հետ, և արտաքոյ քաղաքին շուկայ մը հաստատուած է ի պէտս զօրաց, և քաղաքէն նահակ առնուլ և տալ արգելեալ է սպայից ալ։

= Փանամայի ջրանցքի ընկերութեան բաժնեթղթոց վերջին վիճակահանութեան մեծ պարգևն (250000 ֆրանք) շահեր է գրավաճառ սպասաւոր մը, որ մեծերըս դրամական անձկութեան մէջ ճարալով՝ ստիպուեր է վաճառել բովանդակ թուղթերն, բայց վաճառմանէն յառաջ՝ իւր և որդւոյն բաղդը փորձելու համար, թղթոց ծրարն եռամեայ աղիկան առջևը դրեր և ըսեր է՝ որ հատ մը քաշէ մէջէն, և աղիկան քաշածը պահեր է։ Ահա այս է յիշեալ պարգևը շահող թուղթը։

= Վերջին օրերս ուժգին փոթորիկներ պատահեցան ի Չունգարիա, սաստիկ ցուրտեր եղան և ձիւն ալ տեղաց. մինչև իսկ գայլոյ վոհմակք երևցան ի Կալիցիա, և գիւղացիք հարկադրեցան երթել ջնջել գազանները։

= Պուլղարիոյ Ֆերտինանտ իշխանը շոգենաւով Ռուսճուգի մէկ ծայրէն միւսը երթալու ատեն, կայծակ ինկեր է շոգենաւն կայմին վերայ, յորմէ միայն երկու գայլ հեռի եր իշխանը, բայց չէ վնասուեր։

= Իտալիոյ թագաւորն ու թագուհին Պերլին պիտի երթան առաջիկայ Հոկտեմբերի մէջ։

= Զարմանօք կը հրատարակուի թէ Վատիկանի (Պապին) պաշտօնական թերթն, Օսերվատորէ Ռոմանօ անուն, միայն 4000 օրինակ կը տպուի, և թէպէտ 50 հազար ֆրանք տարեկան նպաստ կընդունի, բայց այժմ 100 հազար ֆրանքէ աւելի պարտք ունի։ Այս պատճառաւ տնօրէնը փոխուեցաւ։

= Պոլղարիոյ (Իտալիա) նաւահանգիստներուն մէջ հրդեհ պատահելով՝ 20000 հրացան այրեր են։ Կասկած կայ թէ չարասիրութեան մը գործ է։

= Աւստրիոյ արտաքին գործոց նախարար Քալնոքի կոմսն հիւանդացած լինելով՝ կայսրը նորա քնակարանը գնաց ի տես։

= Գերմանիոյ և Անգղիոյ կառավարութիւնք իրարահոնութեամբ և դաշնադրութեամբ պիտի բաժնեն իրենց մէջ՝ վճռի ներքև գտնուած ընդարձակ և արդիւնաւոր երկիրներն յԱրևելեան Ափրիկէ, եթէ երկու երկրաց ազգային խորհրդարանք վաւերացնեն հաստատեալ դաշնադրութիւնն։

= Սերպիոյ կառավարութիւնը արգելեց՝ Պուլղարիոյ իշխանութեան կողմանէ ի Պելճիա և ի Լեհորիա ապապրած հրացանոյ և ռազմանիւթոց Սերպիոյ ճանապարհաւ ի Պուլղարիա փոխադրութիւնը։ Պուլղարիա վշտանալով հարկադրեցաւ ուրիշ ճանապարհաւ փոխադրել։

= Սպանիոյ մէջ քոլէրան կը շարունակէ, և կառավարութիւնն զբաղեալ է անհետացունելու համար զայն, և մերձակայ երկրաց իշխանութիւնք աչալրջութեամբ կը հսկեն։

= Փարիզէն լուր եկած է թէ՝ Անգղիոյ կառավարութիւնը ժամանակ մը հետէ կը ջանայ անգղիական լեզուն պաշտօնական ընել Եգիպտոսի խառն դատարանաց մէջ, սակայն եւրոպացի դատաւորաց և փաստաբանաց բազումք կը հակառակին այդ ջանքերն իրենց հանելու համար։

= Սերպիոյ արքայական խնամակալութեան պետ և կառավարութեան հոգին Պ. Քրիսթիչ այս օրերս Վիէննա կերթայ՝ Աւստրիոյ և Սերպիոյ մէջ բարեկամական յարաբերութիւն հաստատելու, և ո՛չ թէ աչքերը դարմանել տալու համար, ինչպես կը պատրուակէ ինքն։

= Բրակայի (Աւստրիա) մէջ, հարուստ վաճառական մը՝ Աւստրիոյ կայսեր դստեր ամուսնութեան ի յիշատակ, 50000 ոսկի ծախիւք որբանոց մը կը հիմնէ, մանաւանդ պատերազմական ընկեցիկ տղայոց պատսպարան լինելու պայմանաւ։

= Ռուսիոյ կայսրն յատուկ հրովարտակաւ հրամայած է որ այս տարի 270 հազար նոր զինուորք իջնեն կոչուին։ Տարեկան զօրագրութեան այսչափ թիւ մը մինչև ցարդ տեսնուած չէ ո՛չ մէկ տէրութեան մէջ և ոչ ի Ռուսիա։

= Փիալէնցայի (Իտալիա) գաւառապետն անյայտ եղեր է։ Կը կարծուի թէ դրամական ծանր դժուարութիւններ ունեցած և մանաւանդ գողութիւններ ըրած է։

= Մարոքի Սուլթանն Իտալիոյ կառավարութենէն սպաններ խնդրեր է՝ Մարոքի սահմանաց վերայ ճէգայիլի կոմսը ամուսնութիւններ չինելու համար։

= Քոլէրայի բազում դէպքեր պատահեր են Իտալիոյ մէջ, մանաւանդ ի Նաբոլի և ի Վենետիկ։

= Սերպիոյ կառավարութիւնն ի Օէլանիկ առևտրական գործակալութիւն մը կը հաստատէ սերպական արտադրութեանց համար։

= Սան-Սալվատորի (Կեդրոնական Ամերիկա) հանրապետութեան նախագահ զօրավար Մէնտէզ ամսոյս 10ին հայցկերոյթի մը մէջ յանկարծամահ եղեր է։

= Փարիզէն հեռագրեալէ կ՚ըսեն թէ տը Ֆրանս քաղաքն (Անգլիեան կղզիք) այրեցաւեր եղաւ, և բնակչաց բազումք անպատրաստ պարտուցին։

= Գերմանիոյ կայսրն առաջիկայ Օգոստոսի 2ին Պետրսպուրկ պիտի գտնուի, և թէպէտ նախապատրաստ զօրավար Դահլերվիլի հետ, բայց ո՛ր և է աշխարհավարական խնդրոյ վերայ խօսակցութիւն չպիտի լինի եղեր։ Կիսոմ կայսրը զինուորական մեծ փորձահանդէսները պիտի տեսնէ և դառնայ ետկեր։

= Մայրաքաղաքէս ի Լոնտոն առ 8է½ի-Նիւզ լրագիրն գրեր են թէ Ռուսիոյ և Գերմանիոյ կառավարութիւնք համաձայնած են Պուլղարիոյ Ֆերտինանտ իշխանը դահընկէց ընելու, և կա՛մ Լէօոլթենպէրկի դուքսը և կա՛մ Շուէտի թագաւորին երկրորդ որդին բազմեցունելու համար։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

XX Միացեալ Նահանգս Հռոմէականք 100 տարի յառաջ 40000 էին, իսկ այժմ այդ թիւը բարձրացած է մինչև 9 միլիոն, որք ունին 80000 կղերական, 10000 եկեղեցի, և 650 վարժարան՝ պապական ոգւով ուսուցանող։

XX Խանուէի ազդեցութիւնը։ Ռիօ Ժանէյրոյի մէջ Կուխմարաէս անուն գիտնականն հետազօտելով զայս՝ փորձեր ըրած է չանց վերայ։ Ուսմբ մը չուն մաքուր բնակարանի մը մէջ պահելով՝ մէկ քանին միայն մրսով, և մէկ քանին խառն ուտելիքով սնուցած է, միևնոյն ժամանակ տրուած ուտելիքը միշտ կշռելով։ Շուներն այս տեսակ կենցաղավարութեան վարժեցնելէ ետքը, ամէն օր իւրաքանչիւրին խառնուած տուած է։ Մսով սնուցեալ չանց վերայ դիտուած է ընչառութեան և արեան չքրջանի արագութիւն, մարմնոյն բարեխառնութեան աւելնալն, աչաց մեծնալն, և միևնոյն ժամանակ օրըստօրէ աւելցած է կերած մսին քանակութիւնն, և հետևաբար մարմնոյն ծանրութիւնն ալ։ Ուստի խառնուէն մարսողութիւնն արագացունելով ուտելու ախորժակն ալ աւելցուցած է։ Իսկ այն չուներն, որ խառն ուտելիքով սնուցեալ էին, և սկսան խառնուէ տալ նոցա, 9 օրէն սատակեցան, իրենց մարմնոյն ծանրութիւնն ալ պակասելով։ Կուխմարաէսի ուրիշ փորձերն ալ կը ցուցնեն թէ խառնուէն կը նուազեցնէ արեան կազերն, իսկ չքարի պարունակութիւնը կաւելցնէ։ Շուն մը՝ զոր միայն ջրով սնուցած էին, 31 օրէն անշնչացաւ. իսկ ուրիշ մը, զոր թէ՛ ջուրով և թէ՛ խառնուէով սնուցած էին, 13 օրէն անշնչացաւ։ Խառնուէն այս կերպով ոչ միայն աննշմարելի է այլև սատմոքսին աւելի սնունդ առնելու նպաստող, որով օգտակար է աշխատող անձանց։ Սակայն մեղջններ գործածողաց օգտակար է, իսկ միայն բուսեղէններ գործածողաց՝ վնասակար։

XXX Մեծն Պետրոսի կենսագրութենէն։ – Շուէդի պատերազմին ժամանակ ձմեռը Պետրսպուրկի շրջանը գիշերապահ զինուորներ դրուած էին, հրաման տրուելով որ գիշերը ո՛չ ոք թողուն թէ՛ քաղաքին մէջ և թէ՛ արտաքոյ քաղաքին։ Օր մը մեծն Պետրոս թատրոն գնացած էր, որ իւր կնքամօր տունէն սակաւ մի հեռի էր։ Կնքամայրն ևս թատրոնին մէջ լինելով, կաղաչէ կայսեր՝ ի վերադարձին իւր հետ լինել այն դիշերը և կայսրն ալ կը հաւանի։ Թատերախաղն հտքը, կայսրն՝ առանց նշմարուելու՝ կելնէ իւր թիկնապահ զինուորին հետ և կառքով կերթայ դէպ ի կնքամօր տունը։ Ձանրան կը հանդիպի պահապան զօրաց մէկին, և ինքզինքն վաճառական ձևացնելով, կը խնդրէ որ թոյլ տայ անցնել։ – Արգելեալ է, կը պատասխանէ զինուորն, ետ դարձիր։ – Կայսրը նախ մէկ րուպլի կառաջարկէ, ապա հետզհետէ մինչև 10։ պահապան զինուորը տեսնելով նորա յամառութիւնը, կըսէ, – կը տեսնեմ որ բարի մարդ մ՚ես. ուստի հրամայէ՛ ետ դարձիր. իսկ եթէ դարձեալ յամառիս՝ յայնժամ պիտի ստիպուիմ կա՛մ զքեզ սպաննել և կամ հրացան մը պարպելով իմաց տալ կայարանին, որպէս զի զքեզ իբր լրտես ձերբակալեն։ – Ցայնժամ կայսրն ուրիշ կողման մէկ պահապանին կերթայ, և դարձեալ վաճառական ձևանալով, անցնիլ կը խնդրէ, և այս պահապանն երկու րուպլիի փոխարէն կը թողու։ Կայսրը ճանրան չարունակելով նէվա սառուցեալ գետոյն վերայէն, ձեռքըուածի մը հանդիպելով՝ կկնայ ջուրին մէջ և հազիւ իւր զինուորը կը յաջողի ազատել։ Ա.յսպէս բոլորովին թրջած երբ կը հասնի կնքամօր տունն, անդ ամէնքը կը զարհուրին պատահածին վերայ։ – Եւ ինչո՛ւ, վեհափառ տէ՛ր, կըսէ կնքամայրը, դուք ինքնին այդչափ կաշխատիք. միթէ կարելի չէ՞ր պահապանները հսկելու համար ուրիշ մը ղրկել։ – Երբ պահապան զինուորը կրնայ մատնութիւն ընել, առաւել քան զիս ո՞վ կրնայ լաւագոյնս փորձել, կը պատասխանէ կայսրն։ Հետևեալ օրը հրաման կընէ մատնիչ գիշերապահը կախել՝ կաշառք առած երկու րուպլին պարանոցէն կախելով։ Իսկ միւսին աստիճանը բարձրացնել և գիշերը առաջարկեալ 10 րուպլին իրեն նուիրել։

Կոլոց կինոյ ցեղերը։ – Առհասարակ անկիւնաւոր և վտիտ են կաթնատու կովերը. վասն զի կը բաժնեն աւելի կաթ կը չինեն քան թէ միս. և եթէ այս տեսակ կովուց մէջ գէշ կազմուածք ունեցողներ գտնուին, պատճառը անասնաբոյծներու յոռի կիրառութիւնն է. միայն կաթ առնելու փոյթ տանելով՝ կենդանւոյն արտաքին ձևին ուշադրութիւն չեն ըներ և կը թողուն անխնամ. բայց չկարծուի թէ դեղեցիկ ձև ունեցող կովերը քիչ կաթ կուտան, ընդհակառակն. կաթնատու կովուց մարմնոյն բունը (առքերէն և գլուխէն զատ մարմնոյն մասը) երկայն և լայն, թեթև և ոսկրուտ է, և նուրբ ուռուդիլ սրունդներուն վերայ բարձրացեալ. արուներուն մէջ նշմարուածին հակառակ՝ մարմնոյն ետևի մասն աւելի լայն, աւելի ծանր և աւելի զարգացեալ է քան առջևի մասն։ Կաթնատու կովուց գլուխը չոր, նուրբ և փիչ մը երկայնեալ է. աչքերը դուրս ցցուած և քաղցրահայեաց. քթին ծակերը լայն են և ադեկ մը բացուած. ցուուկը կարի յոյժ ծակոտկէն և ջրային փոքր կամիկներով ծակոտած, որ առողջութեան նշան են. ականջներն ո՛չ մեծ և ո՛չ փոքր, այլ միջակ մեծութեամբ և նուրբ, և ներքին կողմը դեղնագոյն մազերով պատեալ. եղջիւրները նուրբ, փայլուն, միջակ երկայն, ընդհանրապէս ճերմակ և ծայրը սև, մանաւանդ եթէ գլուխը սև լինի. պարանոցը՝ նուրբ և ուղիղ թանձր. կուրծքը դուրս ցցուած, խոր, դմբեխթարդ, և քանի մը ցեղերու մէջ դէպ յետսերը սլնդիալ. ուսը լայն, հարթ և ո՛չ մեծ. բազմաց ուսոց ետևը խոռոչիկ մը կայ, որ յաճախ նիհարութենէ յառաջ կուգայ. կողերը նուրբ և աղեղնաձև. ոլնայարն՝ ուղիղ, և մէջքն ու քաւակը լայն. կռնակին և մէջքին միացած տեղը երկու կամ երեք խոռոչիկներ կան, որ ողնուրէն իրարմէ զատուելէն յառաջ կուգան, և ՚ի զբօսրը, վերին ակունք, կռնակի Ա.կունք, վերին Դրունք կոչի զանազան անուամբք կը յորջորջուին։ Անասնաբոյծք կամենային կաթնային հանգամանք կը համարին այս խոռոչիկներն ալ, բայց մինչ այ չհատատատուր այս համարուն։ Կաթնատու կովերուն պոչը պէտք է լինի նուրբ և գլանաձև և ծայրը մազուտ. կոնքը կակուղ և լայն, մանաւանդ դէպ ի կուշտերը. մորթը կակուղ և տակի մասէն բաւական անջատեալ։ Լեռնային կովուց մորթն աւելի հաստ է ոմանց կամ դաշտավայրաց մէջ ապրող կովուց մորթէն. նաև աւելի հաստ և նուազ կակուղ է երինջներունը քան յարբունս հասեալ կովուցն։ Եթէ ծննդական դործարանին և ստեանց մէջ գտնուած մասին մորթը դեղին դոյն ունենայ և ծածկուած լինի ճարպոտ նուրբ մաշկերով, և այդ մաշկերը քերուելով թափին՝ նշան է թէ կով իր կողմանէ հարուստ է։ Մաղերը ըլլալու են նուրբ և փայլուն. մազերուն գոյնն այնչափ կարևորութիւն չունի։ Ընտանեաբոյժ Մ՚ԼՈՍ Է.ՔԼԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵՒԱՆՔ։ – Սէրտին ջրաոանդ։ – Թատերախաղ և արարուած. – Տիրան Գ. Փափազեանի։ Ընտանեկան երեկոյթներու արգիւնքը կը ներկայացունէ։ – Գինն է 3 ղրուշ։

ԵՐԱՆԱՒ ԱՂԲԱՐ։ – Կաւակախաղ 1 արարուած։ – Տ. Գ. Փափազեանի։ – Գինն է 40 փարայ։ – Կը գտնուի ջրավաճառ Պօղոս և Յակոբ աղայից քով։

—

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Աշխատասիրեաց Մխիթար Աշճեան

վաւերացեալ Ազգ. Ռուսումն. Խորհրդէն.

Հատոր Ա. և Բ.

Կը վաճառուի ամեն հայ գրավաճառաց քով։ Մէն մի հատոր՝ 5 ղրուշ. երկու հատորն ի միասին 8 ղրուշ։ Կեդրոնատեղին է նշան կ. Պէրպէրեանի տպարանն, կ. Պոլիս, Էսկի Զաքմախլէ ճառատեսի. թ. 61։

—

ԻՐԱՒԱՆՈՒԹԻՒՆ

Կ Ս Մ

Տղոց ալէն ու ականջը էրթալը եղանակ

Ազատ թարգմանութիւն։ – Մ. Մամուրեան։ – Երկրորդ տպագրութիւն։ Գին 5 ղրուշ։

—

Տաճկերէն, Հայերէն և Գաղղիերէն լեզուաց հմուտ Հայ երիտասարդ մը՝ որ երկար ժամանակ. ներէ ի վեր ի քանի Տաճկերէն և Հայերէն լրագրաց աշխատակցած է, կը փափաքի լրագրի և կամ վաճառատան մը մէջ հմուտ ամսոյ աշակով դրագրութեան պաշտօն վարել։ – Դիմել լրագրոյս դրատեղիակը։

—

ԸՆԹՍՅՔ

Բազմական Աշխատակցութեան

Ա. տարի։ – Երկրորդ տպագրութիւն։ – Բարեփոխեալ ըստ ծրագրոյ և յանձնարարութեան Ուսումնական խորհրդոյ ազգային կեդրոնական վարչութեան։ Ի պէտս Դ. դասու ազգային նախակրթարանաց։ Գինն՝ 2 ղրուշ։

—

ՏԱՐԵՐՔ

Մաթեմատիկա

Աշխատասիրութեամբ երկուց հարազատաց Օհանէփեան և Անտոնի Յակոբեան։ Կրնայ օգտակար լինել ամէն կարգի անձանց։ Գինն է 3 ղրուշ։

ՈՒՍՈՒՑՈՒԻՄՆ Գերմաներէն և Օսմանեան լեզուաց։ Ցոյժ կանոնաւոր եղանակաւ և դիւրաստ պայմանաւ։ Տեղեկութիւն կը տրուի ստորագրեալ գրասենեկէն։

Պրուսայի ազգային վարժարանի Թուրքերէն լեզուի ուսուցիչ Մ՚ճ՚. Սահիան էֆէնտի Կուրտիկեան, որ քաջահմուտ է արաբերէն և պարսկերէն լեզուաց, Միւրաթ իւլ Նիգահ անունով քարոյական երկասիրութիւն մը Թուրքերէն լեզուաւ հրատարակած է ի Պրուսա։ Խնամով աչքէ անցունելով զայս՝ տեսանք որ կրնայ օգտակար լինել մեր ազգային վարժարանաց մէջ Թուրքերէն լեզուի ուսանողաց ալ։ Շատ դիւրամատչելի է գինը. – 100 փարայ։

Մամուլ խափանեալ գաւեշտաբերի արուեստէր Գէորգ էֆէնտի Աւետեան՝ Միխիլէն ընտիր ձիթախուղ և օճառ, Թէնեքէին պատուական գինի և Իզմիրէն ընտիր օղի բերել տուած է, և ժամն գնով կը վաճառէ Գալաթիա Բէնէչէնկի-պազար Իխի խան։ Աստնմէ զատ, յատկապէս բերել տուած է Նիւրեոսի պատուական գումանտարիան, Եւրոպոյէն ծօրթ Մալամն եղբարց ընտիր գինեաքները թէ՛ չէրովէ և թէ՛ տակառով, և Իւսկիւտարի ընտիր Զավուշ-իւզիւմիէն ճերմակ գինի։ Նաև ամենաընտիր ձիթապտուղ։ Ծանախոտդք մեծապէս գոհ կը լինին ասոնց թէ՛ ընտրութեան և թէ՛ ժամանութեան համար։

PILULES HOLLOWAY

ԴԵՂՄԱՏԱՑՔ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Լէարդի, ստամոքսի և պլիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, և ամեն ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սրա, սի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի. արիւնը մաքրելով՝ նորա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ և դրդռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ ցուած կապեր, գլխի ցաւեր կվանէր մարսողութիւնը կչափաւորի, և մարմինը մաքրելով՝ զոյգ այն աղտերութիւններէ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ՝ ուժեղ և բնական դիրքը կդնէնու։

ONCUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւն և վէրք բուժելու մասին ունեցած պալատական յատկութեանցը չհաւատարիր ըբնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (շիրիփինճէ), սրունկից և ստեանց վէրքեր կա՛մ բոլորովին կանգնին և կա՛մ կլաւանան. օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւանդ յօդացաւ (եղ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըքաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ինչ աստիճան որ ըլլայ կը դիմագրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և ժամնաւորապէս Պաղչէ-գարու Թաշ-խանի կոմսերը Պ. Դասպարեանի դեղարանը, Թիւ 7, կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն ասքթօր Հոլլօու, ի Լոնտոն Օքսֆօրտ փողոց Թիւ 533։

ՏՆՕՐԻՆ ԵՒ ՏԷՐ

Հ. Ս. Ա. Ա. Ձ Ա Ձ Ե Ա Ն

ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ ԿԱՐԱՊԵՏ ՊԻՊԷՐԵԱՆ

Կ. Պոլիս Ջիէէք-բազար Թիւ 23